Ասեղնագործության խմբակ

Կաթնաղբյուրի Մուշեղ Գալշոյանի անվան միջն. դպրոց

Ղեկավար՝ Ղազարյան Փառանձեմ

Ժամաքանակը՝ 3 ժամ

5-7-րդ դասարաններ (15 աշակերտ)

Ներածություն

Ասեղնագոործությունը դեկորատիվ-կիրառական արվեստի տեսակ է,որը ասեղով,ասեղնագործող մեքենայով,զանազան գործվածքների,կաշվի,թաղիքի վրա տարբեր կարերով ստեղծում է պատկեր (զարդապատկեր),սյուժետային կոմպոզիցիա,դիմանկար,գործվածք,նյութեր զարդարելու արհեստ՝ ասեղի,թելի և մանվածքի կիրառությամբ:

Ասեղնագործելիս օգտագործվում են.տարբեր թելեր՝ բամբակյա,վուշյա,մետաքսյա,բրդյա,ինչպես նաև ուլունքներ,փայլփլունքներ,քարեր,ոսկեթել,արծաթաթելեր:

Ասեղնագործությունը օգտագործվում է հագուստ,գլխարկներ,ծածկոցներ,գուլպաներ,զարդապատկերներ՝ դեկորատիվ պատկերներ ստղծելու համար:

Ասեղնագործությունը գալիս է հին ժամանակներից,երբ մարդիկ ասեղի փոխարեն օգտագործել են բույսերի փշեր և ձկների ոսկորներ,բրդյա թելեր : Օգտագործվել են առաջինը Չինաստանում(մ.թ.1200տարի առաջ): Հին աշխարհում ասեղնագործությամբ զբաղվել են ասորեստանցիները,հրեաները,պարսիկները:Ամենահին նմուշների մասին գաղափար են տալիս ասորաբաբելական արձանների,եգիպտական քանդակների,որմնանկարների,հունական սափորների վրա պատկերված զարդաքանդակները ,ասեղնագործ պատառիկները:

Կարելու,կարկատելու և գործվածքը նորոգելու գործընթացը խթանեց կարելու տեխնիկայի զարգացմանը, և դեկորացիայի զանազան տեսակներ հանգեցրին ասեղնագործության արվեստին:

Ասեղնագործությունը բաժանվում է 2 մեծ խմբի.

1.Կտորի վրա ասեղնագործություն,

2.Թելքաշ կտրովի ասեղնագործություն:

Ասեղնագործությունը հին հունական դիցաբանության մեջ վերագրվում է Աթենաս աստվածուհու անվանը:

Հին հայկական ասեղնագործությունը ունի՝ երեք խոշոր ճյուղեր.

1.Ժողովրդավարական՝ կապված գեղջկական տարազի և կենցաղի հետ,

2.Քաղաքային՝ առևտրա-արհեստավորական,

3.Եկեղեցական:

Նպատակը-Ստեղծագործական նախագծի մեթոդի միջոցով բարձրացնել աեղնագործության խմբակի աշխատանքը 5-7-րդ դասարաններում:

Խմբակի գործունեությունը ուղղված է սովորողների մոտ աշխատանքային հմտություններ և գեղագիտական դաստիարակություն ձևավորելուն:

Խմբակի աշխատանքների ընթացքում զարգանում է աշակերտների ստեղծագործելու մոտիվացիան՝ ճաշակ,որը նպաստում է անձնային աճին:

Ստեղծագործական նախագծերի մեթոդի միջոցով ասեղնագործության դասավանդման արդյունավետության բարձրացումն է:

Խնդիրները-1.ՈՒսումնասիրել նախագծային գործունեության տեսական դրույթները,

2.Բացահայտել սովորողների նախագծային գործունեության էությունը,

3.ՈՒսումնասիրել և մտածել նախագծային առաջադրանքների ստեղծման համակարգի մասին:

Ակնկալվող վերջնարդյունքները

Ասեղնագործության խմբակի նպատակը հետևյալն է.խմբակի աշխատանքների ընթացքում աշակերտներին իրազեկ դարձնել հայկական ասեղնագործությանը:

Ծանոթանալով հայկական զարդանախշերով ասեղնագործությանը՝ աշակերտները արժևորում են մեր մշակույթը,ծանոթանում ասեղնագործության պատմությանը և այդ ամենը կիրառում գործնական աշխատանքների ժամանակ:

Դասարանում պահպանվում են իրենց աշխատանքները,ասեղնագործ կտորները,

որոնք կատարվել և կատարվում են սիրով:

Աշխատանքի ժամանակ աշակերտները ծանոթացել են Վանի, Մարաշի,Այնթափի, Կարինի զարդանախշերին, կարերի տարբեր տեսակներին՝ շարակար,շյուղակար,

հարթակար,խաչկար, թելքաշ և այլ տեսակներ:

Ծանոթանում են ասեղնագործության ավանդույթներին:

Մեր դպրոցում գործել է և գործում է ասեղնագործության խմբակ, հրապարակվել

են նկարներ,ասեղնագործ աշխատանքներ, որոնք տարվա ավարտին ներկայացվում

են ցուցադրության:

Աշխատելիս միշտ էլ ոգևորված են մասնակցում, արդյունավետ սկիզբ և ավարտ է

լինում:

Խմբակի ժամանակ ապահովում ենք ասեղնագործության համար անհրաժեշտ

պարագաներ՝ գունավոր թելեր,կտորներ,ասեղներ,ուլունքներ և այլն:

Սկզբում աշակերտները աշխատում էին փոքր կտորների վրա,իսկ հետո ավելի մեծ աշխատանքների անցան:

Կարևոր մի լրացում անեմ . յուրաքանչյուր աշակերտ ասեղնագործելիս միշտ ընկերներին օգնում է, երբեմն թիմային աշխատանք է ստացվում:

Ամենակարևոր հանգամանքը՝ սիրով են սովորում և աշխատում:

Ասեղնագործության խմբակ